ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-24

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ԳԱԱ Շիրակի հայագիտական
(կազմակերպության անվանումը)
հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Մերգո Հայրապետյանի (այսուհետ՝
(անուն, ազգանուն)
Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագրի
(ծրագրի անվանումը)
(այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 26.943.900 դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1.ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5.սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլկազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն

ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրվածանհամապատասխանությունները,

2.4.11.ծրագրի իրականացման համարանհրաժեշտապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀայաստանիՀանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է ***26.943.900 (քսանվեց միլիոն ինը հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:***

(թվերով և բառերով)

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում էՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2.ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսվածգումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև ***24.788.400 (քսանչորս միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար չորս հարյուր)*** (թվերով և բառերով) ՀՀ դրամ, որն ըստեռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույնպայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերիպատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությանները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք

անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	*ԳԱԱ ՇՀՀ կենտրոն*
	(կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	*ք. Գյումրի, Խաղաղության հրպ. 8/31*
	(հասցե)
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100	*«ՎՏԲ –Հայաստանբանկ» Գյումրում/Ճ*
ՀՎՀՀ 00005673	(բանկային վավերապայմանը)
	Հ/հ 16013019631600
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ *Ս. Հայրապետյան*
(ստորագրության)	(ստորագրության)
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Գ.Տ.

«27» 01 2015. Հավելված1
N 2-29 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Շիրակի հնագիտական եւ պատմագգագրական ուսումնասիրություններ-2» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ *Հայաստանի Հանրապետության 2015թ.պետական բյուջե:*

2. Աշխատանքի նպատակը *2015 թվականին նպատակ է դրվում շարունակել Շիրակի հնագիտության, պատմության, ազգաբանության և արդի բանահյուսության մի շարք հիմնահարցերի ուսումնասիրությունը՝ մասնավորապես խնդիր հետապնդելով*

ա/ Շարունակել և ընդլայնել սահմանային գոտում՝ Հայկաձոր գյուղի դիմաց գտնվող ուրարտական ամրոց-բնակավայրի և Ազատանի մ.թ.ա. 1-ին հազարամյակի համալիր հուշարձանի, Ջրափիի հնավայրի պեղումները, ամբողջացնել Մեծ Մեպասար գյուղի բարձունքին գտնվող վաղբրոնզիդարյան տաճարական համալիրի հնագիտական ուսումնասիրությունը, իրականացնել երկու այլ հնավայրերի հնագիտական հետախուզություն, կատարել չափագրումներ, գտածոների համեմատական ուսումնասիրություն և վերականգնողական աշխատանք:

բ/ Շարունակել Ալեքսանդրապոլի գավառի 20-րդ դարի առաջին տասնամյակների պատմության ուսումնասիրությունը՝ մասնավորաբար ուշադրությունը կենտրոնացնելով գավառի 1918 և 1920 թվականների թուրքական զինակալման պատճառների, այդ ընթացքում այնտեղ տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական և բարոյահոգեբանական իրավիճակի, թուրքական զինվորականության կողմից վարվող ժողովրդագրական քաղաքականության, էթնիկ տեղաշարժերի, կոտորածների, բռնի տեղահանության հարցերի նորովի մեկնաբանության վրա:

գ/ Շարունակել Շիրակի հնագույն պատմության հիմնախնդիրներից մեկի՝ մ.թ.ա. 1-ին հազարամյակում Ախուրյանի ավազանի երկրների և ցեղային միությունների տեղադրմանը, սեպագիր տեղանունների ստուգաբանությանը, նրանց տեղորոշման, բնակչության էթնիկ պատկանելիության, նրա հնդեվրոպական հիմքի ճշգրտմանը, նրա կրոնական հավատալիքներին ու սովորույթներին վերաբերող մի շարք վիճահարույց հարցերի քննությունը:

դ/ Շարունակել Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի քաղաքի պատմագգագրական ուսումնասիրությունը՝2015թ. ամբողջացնելով ժամանակի ընթացքում ժողովրդական արհեստների ու օժանդակ զբաղմունքների փոխակերպումների պատկերը: Ավարտել ստրեսային իրավիճակում /երկրաշարժ, բնական այլ աղետներ/ հայտնված մարդկանց հոգեկարգավորման գործընթացի ուսումնասիրությունը սեռատարիքային և սոցիալական տարբեր խմբերի ազգագրական, բանահյուսական ու ծիսատոնական պատկերացումների նորօրյա դրսևորումների տեսանկյունից: Շարունակել ազգաբանական ուրույն դեմք ունեցող քաղաքի ժամանակակից լեզվավիճակի

ծավալուն քննությունը: ե/Շիրակի ժողովրդական երգարվեստի գիտական արժևորման առումով քննության ենթարկել Շիրակի ժողովրդական պարերի արդի կատարումները, ուրվագծել դրանց փոխակերպումների պատկերը մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում:

3.Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները. «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագիրը իրականացվելու է բարձր պատասխանատվությամբ, գիտական պատշաճ մակարդակով:Ուսումնասիրվող նյութի անաչառ ու հանգամանալի վերլուծությամբ սպառիչ ու ամբողջական պատասխաններ կտրվեն պատմական զավառի հոգևոր և նյութական հարուստ ժառանգության, մշակութային ու հասարակական կյանքի տարբեր կողմերին վերաբերող բազմազան հարցերի: Վերոնշյալ պահանջների կատարումը կապահովի Ծրագրի շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների մասնագիտական բարձր որակ, անհրաժեշտ մակարդակ ու արդյունավետ շարունակականություն:

4. Աշխատանքի բովանդակությունը. «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2 » ծրագիրը 2015 թվականին ներառում է ուսումնասիրվող հարցերի մի քանի ոլորտ.

Ծրագրի նոր հատվածում ևս ավանդաբար կարևոր տեղ է հատկացվում Շիրակի հնագիտական ուսումնասիրությանը, որը կենտրոնի հնագիտության խմբի կողմից /ղեկ.՝ առաջ. գիտաշխատող Լ.Եգանյան/ նախորդ տարիների ընթացքում նկատելի ձեռքբերումներ է արձանագրել /Բենիամինի անտիկ բնակավայրի և դամբարանադաշտի հանգամանալի հետազոտություն, Անիի նորահայտ արվարձանի՝Հայկաձորի քարանձավային բնակավայրի արդյունավետ պեղումներ ու նշանակալի արդյունքներ և այլն/: 2015-թ. առաջին կիսամյակը կտրամադրվի 2014-ի պեղումներով հայտնաբերված նյութերի կամերալ ուսումնասիրմանը և վերականգնմանը, իսկ երկրորդ կիսամյակում կսկսվի դաշտային աշխատանքը: Նախատեսվում է, որ կենտրոնի հնագետները կշարունակեն պեղել երկու հնավայրերում՝ Մեծ Մեպասարի վաղբրոնզիդարյան տաճարական համալիրի /հունիս-հուլիս/ և Հայկաձորի երկաթիդարյան ամրոց-բնակավայրում /հոկտեմբեր-նոյեմբեր/: Առաջինում նախատեսվում է 2015-ին ընդլայնել պեղումները տաճարական համալիրի սրբարանից դեպի հարավարևմուտք ընկած հատվածում մինչև 8մ շառավղով և դեպի արևելք՝ ստանալու և հստակեցնելու համար բոլոր կառույցների գործառական նշանակության և հատակագծային ամբողջական պատկերը, ունենալու համալիրի սահմանների ավարտուն նկարագիրը, նաև ձեռք բերելու նոր գտածոներ, որոնց ժամանակագրական սանդղակի ճշգրտումը կօգնի պարզելու հուշարձանի տիպաբանական աղերսները այլ հնավայրերի հետ, էլ ավելի ամբողջական դարձնելու պատկերացումը այս վաղբրոնզիդարյան հնավայրի պատմամշակութային անգնահատելի արժեքի, պատմական այդ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի, հավատալիքների ու կենցաղի մեջ նրա տեղի ու նշանակության մասին՝նկատելի առաջքայլ ապահովելով մեր հայրենիքի վաղբրոնզիդարյան նյութական մշակույթի ուսումնասիրության բնագավառում:

Տարածքի մ.թ.ա. 1-ին հազարամյակի պատմության ու մշակույթի հիմնախնդիրների լուծման տեսակետից կարևորվում է նաև 2015-ին Հայկաձորի ուրարտա-

կան ամրոց-բնակավայրի պեղումների շարունակումը, այստեղ երկաթիդարյան դամբարանադաշտի հայտնաբերման նպատակով հնագիտական հետախուզության անցկացումը:

2015թ. Կենտրոնում սկիզբ կառնի նաև երկու նոր հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը: Դրանցից մեկը Ջրափիի վաղ բրոնզի-երկաթի լայն տարածման ժամանակաշրջանների համալիրն է՝ ամրոց, բնակավայր և դամբարանադաշտեր: Հուշարձանի հնագիտական հետախուզությունը նախկինում կատարվել է, 2015-ի օգոստոսին նախատեսվում են առաջին պեղումները: Երկրորդ հնավայրը Եղնաջուրի վաղբրոնզիդարյան նորահայտ բնակավայրն է, որի հնագիտական հետախուզումը և առաջին պեղումները նախատեսվում են սեպտեմբեր ամսին:

Ազատանի մ.թ.ա.9-8-րդ դարերի ամրոց-բնակավայրի, մ.թ.ա. 9-8, 8-7 և 8-6-րդ դարերով թվագրվող դամբարանադաշտերի պեղումները, որոնք 2012-2014թթ. խիստ արդյունավետ եղան գտածոների առատությամբ ու որակով, 2015-ին ևս կիրականացվեն Գերմանիայի Հալեյի համալսարանի հնագիտական արշավախմբի հետ համատեղ: Իր բոլոր բաղկացուցիչների լավ պահպանվածությամբ խիստ բացառիկ հուշարձանը հնարավորություն է ընձեռում նույն տեղում դիտարկել մ.թ.ա. 12-րդ դարից մինչև հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթն իր զարգացման մեջ: Ամրոցի և բնակավայրի տարբեր շերտերից հայտնաբերված նյութերի բաղդատումը տարբեր ժամանակաշրջանների երեք դամբարանաշտերի տվյալների հետ /դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի ու ծեսերի արմատական փոփոխություններ/ հնարավորություն կտա դիտարկելու ինչպես կրոնածիսական իրողությունների, այնպես էլ հասարակական և տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքը վերոհիշյալ ժամանակահատվածում, այլև կարող է պատասխան տալ հոգևոր և նյութական մշակույթի հստակ թվագրման բազմաթիվ հարցերի: Նախատեսվում են նաև հնագիտական փրկարարական աշխատանքներ մարզի տարածքում գտնվող մի քանի հնագիտական հուշարձանների /Մայիսյան, Երերույք, Կումայրի/ մաքրման, չափագրման, կոնսերվացման ու պահպանման նպատակով:

Վերոնշյալ չորս հնագիտական հուշարձանների պեղումների, հայտնաբերված նյութերի կամերալ մշակման, վերականգնման և կոնսերվացիայի համար 2015-ին կպահանջվի 7 միլիոն ՀՀ դրամ:

Հետազոտությունների առանձին ոլորտ է Շիրակի հին ու նոր պատմության մի շարք հիմնախնդիրների նորովի քննությունը: 2015-ին շարունակվելու է Ախուրյանի ավազանի ու հարակից շրջանների վերաբերյալ սեպագիր աղբյուրների, հատկապես ուրարտական թագավորների թողած արձանագրությունների տվյալների, պատմիչների հաղորդումների, տարբեր ժամանակաշրջաններից հայտնի տեղանվանական փաստերի ուսումնասիրությունը, որ հնարավոր կդարձնի վերջնականորեն ճշգրտել Էրիախի /Կենտրոնական Շիրակ/ երկրի հարևան մանր երկրների /Իշկիգուլու, Բուզունիա, Կազարթա և այլն/ տեղադրությունը, տեղանունների ստուգաբանությունը և դրա միջոցով՝ նաև այդ երկրների բնակիչների էթնիկ պատկանելությունը: Ծրագրվել է 2015-ից ուսումնասիրություններն առաջ տանել ոչ միայն Էթիունի ցեղամիության բնակչության էթնիկական կազմի բացահայտման, այլև նրա առասպելաբանական պատկերացումների ու պաշտամունքի հարցերի վերհանման, նրա կազմում գտնված ցեղային երկրների տեղադրության ճշգրտման և նույն տարածքից հայտնի մ.թ. առաջին հազարամյակի կեսերի վարչաքաղաքական միավորների՝ Էթիունիի հետ ունեցած կապերի պարզաբանման ուղղություններով: Էթիունի վարչաքաղաքական կազ-

մավորման ամբողջական ուսումնասիրությունը դառնում է պարտադիր այն պարզ պատճառով, որ Ախուրյանի ավազանն ամբողջությամբ մ.թ.ա. առաջին հազարամյակի առաջին դարերում գտնվել է նրա կազմում: Այս հարցերին հարակից՝նաև շարունակվելու է պատմական գավառի Երվանդունյաց շրջանի պատմության հարցերի քննության ուսումնասիրության շրջանակի ընդլայնումը:

2015-ին կենտրոնում կշարունակվի գավառի և հարակից տարածքների պատմաժողովրդագրությանը նվիրված ուսումնասիրությունը: Նախատեսվում է սկսել Ճորոխի ավազանի 1830-1918թթ. ժողովրդագրական դրությանը վերաբերող արխիվային նյութի հավաքման և վերլուծության աշխատանքները: Սրանով սկիզբ կդրվի «Տայքը 1830-1918թթ.» ծավալուն հետազոտությանը՝ նպատակ հետապնդելով արխիվային փաստաթղթերի, վավերագրերի, վիճակագրական տվյալների, պատմագիտական, տեղագրական և ժողովրդագրական գրականության քննախույզ ուսումնասիրության հիման վրա բացահայտել Տայքում քաղքեդոնության տարածման պատճառները, վերջինիս բացասական հետևանքները Տայքի դավանաբանական , հետագայում նաև՝ կրոնական պատկերի վրա: Նկատի է առնվել նաև այն, որ վերջին տարիներին վրացթուրքական համագործակցությունը հայկական պատմական հուշարձանների վրացականացման գործում լուրջ վտանգ է պարունակում երկրամասի հայկական հուշարձանների համար: Այս առումով՝ նշված թեմայի ուսումնասիրությունը դառնում է օրակարգային խնդիր: Նախատեսվում է գիտաշխատողի արտասահմանյան գործուղում՝ Վրաստանի ազգային արխիվ և ուղևորություն Տայք /Ճորոխ/:

2015-ից սկիզբ կառնի նաև մեկ այլ պատմաժողովրդագրական թեմա՝ «Ալեքսանդրապոլի գավառը 1918-20թթ.»: Նախորդ տարի Կենտրոնում ամբողջովին ավարտվել է գավառի 19-րդ դ. և 20-րդի սկզբի ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունը, որը լիովին հնարավորություն է տալիս գավառի պատմության վերջին փուլի պատմաժողովրդագրական ուսումնասիրությամբ ամբողջացնելու նրա շուրջ ութսունամյա պատմությունը:

Թեմայի շրջանակներում 2015-ին նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա կկատարվի Առաջին աշխարհամարտի տարիներին գավառում հաստատված փախստական-գաղթականների քանակի, նրա էթնոկրոնական կազմի, ըստ բնակության նոր վայրերի տեղաբաշխման, տեղի բնակչության վիճակագրական պատկերի ու սոցիալ-տնտեսական վիճակի վրա ունեցած ազդեցության խիստ արդիական հարցերի ուսումնասիրությունը, նորովի գիտական մեկնաբանություն կստանան 1918թ. հայ-վրացական կարճատև պատերազմի հետևանքով Ալեքսանդրապոլի գավառի կրած մարդկային և նյութական ծանր կորուստների սովի և համաճարակային հիվանդությունների և այլ հիմնահարցեր:

Ծրագրով նախորդ հատվածում կատարված աշխատանքները լիովին հնարավորություն են տալիս Կենտրոնում ձեռնարկել Շիրակի տարածաշրջանի քաղաքական պատմության ուսումնասիրությունը: 2015թ. քննության առարկա կդառնա խորհրդային իշխանության հաստատման շրջանի /1921-1930թթ/ քաղաքական պատմությունը: Մասնավորապես անդրադարձ կլինի հետևյալ հարցերին. Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը Հայաստանի վրա, ռազմական կոմունիզմի քաղաքականության անհրաժեշտությունը երկրում, հատկապես թուրքական բռնազավթման ռեժիմի պայմաններում գոյատևած Ալեքսանդրապոլի գավառում, դասակարգային պայքարի պարտադրման անհեթեթությունը թուրքերի կողմից ամբողջովին թալանված և դաժան բռնությունների ենթարկված բնակչության մեջ, տեղական

խորհուրդների ընտրությունները 1921-ի վերջին, խորհրդային իշխանության մարմինների ստեղծումն ու գործունեությունը և այլն:

2015-ին Կենտրոնում կշարունակվի նաև գավառի և հատկապես նրա կենտրոնի՝ Ալեքսանդրապոլի հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքի ուսումնասիրությունը: Նորովի մեկնաբանման կարիք ունեն գավառակենտրոնում և գավառի տարածքում ազատագրական պայքարի գաղափարախոսության ուրույն դրսևորումների, հասարակական կյանքի վայրիվերումների ու վերադասավորումների, ազգային քաղաքական կուսակցությունների գործունեության հարցերը: Վերոնշյալ նպատակներով 2015-ին կուսումնասիրվեն Հայաստանի ազգային արխիվի թիվ 7, 56, 57, 299, 545, նրա Գյումրու բաժանմունքի, Երևանի Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի, ԳԱԹ-ի, նաև Վրաստանի պատմության պետական արխիվի մի շարք ֆոնդեր, վեր կհանվեն և կհրատարակվեն նորահայտ արխիվային փաստաթղթեր, մասնավոր ֆոնդերի նյութեր, ժամանակակիցների հիշողություններ:

2015-ի օգոստոսին Հայոց մեծ եղեռնի 100-ամյակի տարելիցի նշման համատեքստում կենտրոնը Գյումրիում կկազմակերպի երիտասարդ պատմաբանի հանրապետական ամառային երկշաբաթյա դպրոցի /30 ունկնդրի համար/՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման և պատմական իրավունքի վերականգնման հիմնահարցը» խորագրով: Դպրոցի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ուսումնական դասընթացներ կենտրոնի գիտաշխատողների և հրավիրված դասախոսների կողմից, անցկացնել թեմատիկ բանավեճեր, հանդիպումներ ցեղասպանության ականատեսների ժառանգների հետ:

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագրի հետազոտական բաղադրիչներից է նրա հարուստ ազգագրական ժառանգության և վերջինիս մերօրյա դրսևորումների գիտամշակութային արժեքավորումը: 2015-ին կշարունակվի Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի պատմազգագրական ծավալուն ուսումնասիրության երկրորդ մասի իրականացումը՝ նվիրված քաղաքի լենինականյան ժամանակահատվածի ազգագրական դիմագծի ամբողջացմանը: Դրա առանձին շտրիխներ, որ վերաբերում են տնտեսական կյանքին /20-րդ դարասկզբին Լենինականի գավառի մանր գյուղացիական տնտեսությունների քայքայում, կոլեկտիվացման գործընթաց, դրանցով պայմանավորված՝ դեպի արդյունաբերական քաղաք գյուղական զանգվածների արտագաղթ, մարզի տարածքում էթնոժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխություն/, հայրենադարձության նշանակությանը ու ժողովրդագրական տեղաշարժերին, մասնավորաբար, դեպի քաղաք գյուղական բնակչության միգրացիային, ուշադրության կենտրոնում էին դեռ նախորդ տարիներից: 2014-ին դրանց գումարվեց նաև Լենինականի ու համանուն շրջանի սոցիալիստական տնտեսության պատմության 1920-1950թթ. հատվածի, միգրացիոն երևույթների, բնակավայրերի կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը, որը կշարունակվի նաև 2015-ին: Հետազոտական աշխատանքների համար օգտագործվելու են Հայաստանի ազգային արխիվի, նրա Շիրակի մասնաճյուղի, Ամասիայի, Աշոցքի, Ախուրյանի, Արթիկի և Մարալիկի ներկայացուցչությունների ֆոնդերում պահպանվող փաստաթղթերը, որոնք վերաբերում են 1920-1950թթ. ընթացքում անցկացված մարդահամարներին, բնակչության թվի շարժընթացին, նրա բնական վերարտադրության եղանակներին, զբաղվածության, կրթական մակարդակի ու սոցիալական կազմի փոփոխություններին: Նախատեսվում են նաև գիտարշավներ մարզի տարածքում՝ դաշտային ազգագրական նոր նյութերի հավաքման ու մշակման նպատակով:

2014-ից կենտրոնում սկիզբ է առել և 2015-ին կշարունակվի ազգահոգեբանական բնույթի նոր ուսումնասիրություն, որի նպատակն է հաջորդաբար կյանքի կոչել մարզի համայնքների պատմազգագրական, կրոնածիսական, ժողովրդագրական և ազգահոգեբանական առանձնակի պատկեր-դիմագծերը և դրանց հիմքի վրա հնգամյա ժամկետում կազմել մարզի ամբողջական ազգագրական քարտեզը: Մեր ազգային նկարագրի և ավանդույթի պահպանման միտումով 2015-ին կշարունակվեն նաև ժողովրդական ծեսերի ու տոների ժամանակակից փոխակերպումների ուսումնասիրությունը, դրանց պահպանման և թարմացման արդյունավետ լուծումների առաջադրումը, կենցաղավարող տոնածիսական արարողություններին նվիրված գիտաճանաչողական բնույթի գրքույկների հրատարակումը, մարզի տարածքում նպատակային ազգագրական գիտարշավների կազմակերպումը և այլն: Մեպտեմբեր ամսին կենտրոնը Գյումրիում կկազմակերպի արդեն ավանդական Հացի փառատոնը, հոկտեմբերին՝ արևելահայերի ու արևմտահայերի ազգային խոհանոցի նոր ցուցադրանք: Որպես անդրադարձ Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին՝ նախատեսվում է մայիսին անց կացնել գիտագործնական սեմինար այնպիսի ազգահոգեբանական խնդիրների քննությամբ, ինչպիսիք են՝«Եղեռնի հոգեբանական ազդեցությունը 3-րդ սերնդի մտախառնվածքի վրա», «Ճակատագիր արտերևույթը հոգեվերլուծության տեսության մեջ», «Յեղասպանության ժխտումը թուրքական մտածելակերպի ենթատեքստում» և այլն:

Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրու մշակութային կյանքի խնդիրներից 2015-ին կշարունակվի քաղաքի գեղարվեստի պատմության ուսումնասիրությունը, որ սկիզբ է առել կենտրոնում չորս տարի առաջ: Նրա կերպարվեստային կյանքի ժամանակագրական և թեմատիկ շրջանաբաժանումների համատեքստում քննության կառնվեն նաև տեսական հարցադրումներ՝ կապված տարբեր տարիների գյումրիաբնակ արվեստագետների գործերի արժեքավորման խնդիրների հետ:

2015թ. ՇՀՀ կենտրոնում շարունակվելու է նաև Շիրակի ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրներին և զարգացման միտումներին նվիրված նախորդ տարիների հետազոտական աշխատանքը, որը 2013-2014թթ. ընթանում էր ավանդական պարի երաժշտական բաղադրիչի տիպաբանական ու ոճական բնորոշիչների բացահայտման և այս ավանդական ժանրի ամբողջական անվանացանկի կազմման ուղղությամբ: 2015-ին քննության կառնվեն Շիրակի ժողովրդական պարերի արդի կատարումները, կուրվագծվի դրանց փոխակերպումների պատկերը մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում: Այդ նպատակով կկազմակերպվեն մի քանի գիտարշավներ ինչպես համայնքներում կենցաղավարող պարեղանակների ու նվագարանային կատարումների, այնպես էլ տվյալ համայնքի համար տիպական երաժշտական բանահյուսության նմուշների ձայնագրման ու նոտագրման նպատակով: Զուգահեռաբար կկատարվի նաև նախկինում գրառված երաժշտական նյութերի վերծանում և համակարգչային մշակում:

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում շարունակվելու է նաև 2013-ից Կենտրոնում սկիզբ առած «Քաղաքային խոսվածք. Գյումրու արդի լեզվաիմաստի ուսումնասիրության հարցեր» թեման: 2014-ից սկսվել է Գյումրու խոսվածքի հասարակական տարբերակվածության հարցերի հանգամանալի քննությունը, որ կարվի նաև 2015-ին՝առանձնակի ուշադրություն դարձնելով երկրաշարժով թելադրված ժողովրդագրական տեղաշարժերին, տնտեսական-քաղաքական ազդակներին /քաղաքի վերականգնման առանձնահատ-

կություններ, հատակագծային էական փոփոխություններ, այնտեղ ռուսալեզու, նաև երկլեզվակիր տարրի առկայություն, օրավուր ահագնացող արտագաղթի հետևանքով քաղաքի բնակչության աղետալի նվազում ու տնտեսության համատարած կաթվածով պայմանավորված սոցիալական ծանր իրավիճակ/, որոնք այս կամ այն կերպ իրենց կնիքն են դրել խոսվածքի հետագա ձևափոխումների վրա: Կշարունակվեն 2014-ին անցկացված հարցախույզի պատասխանների մշակման ու վերլուծության աշխատանքները:

Կենտրոնի և հրավիրված պատմաբանների, ազգագրագետների և բանագետների ջանքերով 2015-ի հունիսին նախատեսվում է Գյումրիում կազմակերպել հանրապետական գիտական ընթերցումներ՝ «Շիրակը որպես ցեղասպանված արևմտահայության մշակույթի հանգրվան» խորագրով՝ նվիրված արևմտահայ խոսվածքների, կենցաղավարության, ազգային խոհանոցի և ինքնության այլ բնորոշ տարրերի Շիրակ ներթափանցմանը և տեղական մշակույթում դրանց յուրացման նաև փոխակերպական առանձնահատկություններին:

6. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը.

ա/ *2015 թվականի ամփոփիչ հաշվետվություն,*

բ/ *տարեվերջին ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուի 18-րդ հատորի /14 հրատ. մամուլ/ լույս ընծայում, տարվա ընթացքում պատրաստված հոդվածների, հաղորդումների ու հրապարակումների տպագրություն,*

գ/ *արդյունավետ մասնակցություն միջազգային և հանրապետական գիտամշակութային միջոցառումներին /գիտաժողովներ, գիտ. ընթերցումներ, սեմինարներ և այլն/*

դ/ *ծրագրի շրջանակներում երկու ամբողջական աշխատանքների տպագրություն Կենտրոնի «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշարի երկրորդ պրակում, չորս մենագրությունների և երկու ժողովածուների հրատարակում:*

ե/ *Համացանցում տեղադրված Կենտրոնի երկլեզվյա կայք-էջի թարմացում /www shirakcenter.sci.am/՝ կենտրոնի 2015թ. գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ:*

Տնօրեն՝ _____ (*Ս. Հայրապետյան*)
(ստորագրություն) (անունազգանուն)

Հավելված2
«27» 01 2015թ.
N 2-24 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Շիրակի հնագիտական եւ պատմագգագրական ուսումնասիրություններ -2» ծրագրի
(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիր	ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատման չափանիշներ	Վերջնա-ժամկետ	պահանջվող գումարը (դրամ)
1	Գիտական սեմինարներ	Պարբերաբար կլսվեն հաղորդումներ Ծրագրով նախատեսված ուղղություններով իրականացվող աշխատանքների ընթացքի մասին		կատարման ընթացքի գնահատում	Ամեն եռամսյակի ավարտին	
2	Դաշտային աշխատանքներ	Բանահավաքչական և հնագիտական աշխատանք, պեղումներ, արշավախմբերի և գիտարշավների գիտական գործուղումների կազմակերպում	Ժող. բանահյուսության, երգարվեստի նոր նմուշների գրառումներ, սոցիոհարցումների, ֆոկուս-խմբերի կազմակերպում, հնագիտական հետախուզություն, պեղումներ, չափագրումներ	Գիտական արժեք ներկայացնող նյութերի համակարգում և տվյալների օգտագործում	Տարվա ընթացքում	
3	Աշխատանք սկզբնաղբյուրների հետ	Արխիվային նյութերի և փաստաթղթերի ձեռքբերում տարբեր արխիվներում և ֆոնդերում, աշխատանք գրադարաններում		-- // --	Տարվա ընթացքում	
4	Նյութերի կամերալ մշակում	Հավաքված նյութերի քարտագրում, անձնագրավորում, վերականգնում, կատալոգների կազմում, երաժշտական նյութերի նոտագրում		-- // --	Տարվա ընթացքում	
5	Նյութերի վերլուծում և շարադրանք	Գիտական հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, մասնակցություն գիտաժողովների, սեմինարների		Պատրաստի աշխատանքների տպագրում	Տարվա ընթացքում	

6	Գիտահրատարակչական աշխատանք	կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուի 18-րդ հատորի , «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշարի երկրորդ պրակի, մենագրությունների և ժողովածուների հրատարակում			սեպտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր	
Ընդամենը						26.943.900 դրամ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՌՈՒԲԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱԱ ՇՀՀ կենտրոն ՊՈԱԿ

(կազմակերպության անվանումը)

Տնօրեն՝ *Մ. Հայրապետյան*

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

«27» 01 2015թ. Հավելված 3
N Ճ-24 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

«Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ - 2» ծրագրի
(ծրագրի անվանումը)

մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս *ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի* և ի դեմս *ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի* տնօրեն *Սերգո Հայրապետյանի*, վկայում
(կազմակերպության անվանումը) (անուն ազգանուն)

ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2015թ. N Ճ-24 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ *26.943.900 (քսանվեց հազար ինը հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր)* ՀՀ դրամ գումարի չափով:
թվերով և բառերով

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	*ԳԱԱ ՇՀՀ կենտրոն ՊԱԿ*
	(կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24_	*ք. Գյումրի, Խաղաղության հրպ. 8/31*
	(հասցե
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100	*«ՎՏԲ-Հայաստան բանկ» Գյումրու մ/ճ*
ՀՀ 00005673	*Հ/հ 16013019631600*
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ *Ս. Հայրապետյան*
(ստորագրության)	(ստորագրության)
ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	

Հավելված4

«27» 01 2015թ.

N Ճ-24 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	20235.6	4047.1	5058.9	5058.9	6070.7
2	տնտեսական և այլ ծախսեր	6708.3	1341.6	1677.1	1677.1	2012.5
3	Ընդամենը	26943.9	5388.7	6736.0	6736.0	8083.2

Տնօրեն՝ _____ (Ս. Հայրապետյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (Լ. Կոստանյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.